ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 187-Ա 07 ապրիլի 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 174-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 3-րդ մասի, 34-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրամադրված ZZ N 248865 անաշխատունակության թերթիկը, ինչպես նաև Արփինե Կարապետյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2025 թվականի ապրիլի 1-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ձորագյուղի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արփինե Կարապետյանին ժամանակավորապես անաշխատունակության մեջ համարելու և տնօրենի լիազորությունների ու պարտականությունների կատարումը Սուսաննա Մակարյանին վերապահելու մասին» N 174-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 1-ին կետի «ապրիլի 3-ը ներառյալ» բառերը փոխարինել «ապրիլի 4-ը ներառյալ» բառերով:

2) որոշումը լրացնել նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ձորագյուղի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արփինե Կարապետյանին 2025 թվականի ապրիլի 7-ից համարել աշխատանքի մեջ:»:

07.04.2025

X

ՎԱՀԱՆ ՁԱՐՈՅԱՆ

Подписано: ZAROYAN VAHAN 3103860463

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Վ. ՁԱՐՈՅԱՆ
Ք. Գավառ